

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

R. Lindau. „Ein unglückliches Volk“. P. Լինդաու՝ «Դժբակեց ժողովուրդ»,
վէպ:

Կար ժամանակ, երբ հայկական կեանքը, նրա անցեալն ու ներկան մի անյայտութիւն, մի terra incognita էր ամբողջ քաղաքակիրթ աշխարհի համար, երբ միայն սակաւաթիւ ճանապարհորդներ, աշխարհագէտներ և զիտնականներ տեղեկութիւն ունեին, թէ որտեղ է ապրում հայ ժողովուրդը. թէ ի՞նչ է ներկայացնում նրա հայրենիքը, նրա անտեսական ու քաղաքական վիճակը:

Վերջին տարիների անցքերի չնորհիւ այժմ քաղաքակիրթ ազգերը աւելի լաւ են ճանաչում հայն:

Այդպէս՝ գերմանական մամուլը գեռ շատ տարիներ առաջ հայերի մասին նիւթեր է մատակարարել իր ընթերցողներին. Դեռ 1841 թւականին լոյս տեսան հաչակաւոր գօրավար Մոլտկէի նամակները (Moltke, „Briefe über Zustände und Begebenheiten in der Türkei aus den Jahren, 1835—1839“), որոնք ի միջի այլոց մի շարք հետաքրքրաշարժ տեղեկութիւններ էին հաղորդում և հայերի մասին. Դեռ 1878 թւականին յայտնի ճանապարհորդ Սմանդ Շվայցեր-Ներշնչենֆելդը զրեց իր նշանաւոր գիրքը՝ «Հայաստան; Նրա բնութեան և ազգաբնակութեան մի պատկերը» („Armenien. Ein Bild seiner Natur und seiner Bewohner“) խորագրով. գեռ 70-ական և 80-ական թւականներին գերմանական պարբերական հրատարակութիւնների մէջ լոյս տեսան մի քանի թուուցիկ տեղեկութիւններ հայերի կրած տառապանքների մասին, սակայն այդ բոլորն էլ ոչ մի ուշադրութեան չ'արժանացան, ոչ մի հետաքրքրութիւն կամ համակրանք չը զարթեցին. Լարշենֆելդի աշխատութիւնը չոկահմբել, 1903.

անվաճառ մնում էր գրավաճառանոցների արխիւում, մինչև որ վրայ հասան 90-ական արիւնոտ տարբիները և նրան նորից հը- րապարակ հանեցին: Այժմ գերմանացին գնում էր 20-30 տարի առաջ լոյս տեսած այդ գերքը, որովհետեւ «Հայաստան» և «Հայ» բառերի հետ նրա յիշողութեան մէջ մի ամբողջ պատմութիւն էր կապուած:

Բայց ինչն էր արդեօք մի այդպիսի մետամորֆուզ առա- ջացնողը: «Մենք գերմանացիներս, ասում է Կարլ Մարկս, միայն մի անգամ ենք ազատութեանն ուղեկցել, այն էլ նրա թաղման օրը»: «Մենք ոչ մի ազգ չենք ազատել, աւելացնում է էդ. Բերնշտայն, ոչ մի ազգի մարդասիրական օգնութիւն ցոյց չենք առել»...

Ուրեմն բոլորովին այլ հիմք ունէր Գերմանիայում սկը- սուած շարժումը յանուն հայերի, այլ շարժառիթներից էր ա- ռաջացել գերմանացիների հետաքրքրութիւնը զէպի հայկական հարցը: Այդտեղ ամենից շատ դեր էին խաղում պետութեան գա- ղութային քաղաքականութիւնը—Թիւրքիայում տնտեսական- քաղաքական զօրեղ ազգեցութիւն ձեռք բերելու ցանկութիւ- նը մի կողմից, իսկ կրօնական ձգումները միւս կողմից: Կար, իհարկէ և անկեղծ մարդասիրութեան ու բարեգործութեան հոսանք, բայց շատ աննշան էր միւսների համեմատութեամբ *):

Սակայն մինչև օրս լոյս տեսած յօդուածներն ու գրքերը իրանց մէջ պարունակում են ճանապարհորդական նկարագրու- թիւններ, թուոցիկ տեղեկութիւններ, այս կամ այն մասնակի հարցի քննութիւն, այս կամ այն ձեռվ կոչ, բայց նշ մի ամ- բողջ ուսումնասիրութիւն:

Ահա այդ պակասորդը լրացնելու փորձն է արել յայտնի վիպասան Ռուգոլիք Լինդաու իր երկատոր աշխատութեամբ: Նա վիպական ձեւ է առեւլ այդ աշխատութեանը և հէնց գրա- նով էլ գարձել է նրան աւելի հետաքրքրաշարժ: «Դժբախտ ժո- ղովուրդ» («Ein unglückliches Volk») անունն է կրում վէպը:

Անցեալ 1092 թւականի սկզբներնեմն էր, որ յիշեալ վէ- պը տալագուել՝ սկսեց «Vossische Zeitung»-ի էջերում: Մի կող- մից վէպի նիւթն ու վերնագիրը, իսկ միւս կողմից հեղինակի հոչակը բաւական էին, որպէսզի հէնց առաջին անգամից ընդ- հանուր հետաքրքրութիւն գարթեցնէին, ուշադրութիւն գրա- ւէին:

*.) Այդ մասին տես մեր «Հայերը և գերմանացիները» յօդուածը «Մշտակրւմ», 1903 թ., №№ 43—44:

Եւ իսկապէս Ռուդոլֆ Լինդառն (սա Պառլ Լինդառնի եղբայրն է) վաղուց արդէն յայտնի է իր հայրենիքում։ Նրա բազմաթիւ վէպերի և մանրավէպերի նիւթը վերցրուած է գլխաւորապէս զերմանական կեանքից։ Բայց այդ միենոյն ժամանակ նա զրել է և մի քանի պատկերներ ու պատմուածքներ թիւրքահայի կեանքից—«Թիւրքական պատմուածքներ», «Յանար և Մէջփեր», «Երկու ճանապարհորդութիւն դէպի թիւրքիա», «Էֆէնդիի պատմածները» վերնագրերով։

Նա շատ լաւ գիտէ թիւրքերէն, երկար ժամանակ ապրել է թիւրքիայի կենտրոնում, շփուել, մօտիկ յարաբերութիւն է ունեցել քաղաքական ամենալարձր շրջանների հետ, անձամբ տեսել է Կ. Պոլսի հայկական կրտորածները և մօտիկից ուսումնասիրել է նրանց պատճառներն ու հետեանքները, դրական ու բացասական կողմերը։

Ահա այդ բոլորի արդիւնքն է կազմում «Դժբախտ ժողովուրդ» վէպը։

«Ուշաղրութեամբ կարգացէք իմ զրած վէպը, ասաց պատկառելի հեղինակը մի մասնաւոր խօսակցութեան միջոցին, և այն ժամանակ դուք կը տեսնէք, որ ես ամենաջերմ համակըրանք ու կարեկցութիւն եմ ցոյց տալիս դէպի ձեր ազգը, դէպի հայերը Բայց միենոյն ժամանակ ես եղել եմ անաչառ, աշխատել եմ հեռու լինել միակողմանիութիւնից, ուստի և պարզ կերպով արտայայտել եմ իմ համոզմունքը հայկական դէպերի մասին»...

Վէպի գլխաւոր հերոսը գերմանացի պաշտօնաթող մի սպայ է—կը ազգանունով։ Անզոյց թղթախաղը նրան գժուարին դրութեան մէջ է դնում, մեծամեծ պարագերի տակ է զցում, ուստի և նա վճռում է թողնել զինուորական ծառայութիւնը, որը ճանապարհով որոնել բազզի դուռը։ Բայց մեալ հայրենիքում, ծանօթ մարդկանց շրջանում—զա ցանկալի չէր պատւասէր երիտասարդի համար։

Նա վերցնում է մի քանի յանձնարարական նամակներ և ճանապարհ է ընկնում դէպի հեռու աշխարհ, ովլիխանոսի այն կողմը—դէպի Ամերիկայի Միացեալ Նահանգները։ Այստեղ նա անձնատուր է լինում ազնիւ ու յամառ աշխատանքի, իսկ այդ աշխատանքը տալիս է նրան որոշ թեթևութիւն, նիւթական որոշ արգիւնքներ։

Ամերիկան ազատ երկիր է, որ իր գիրկն է ընդունում եկուորներ ամեն կողմերից, ամեն ազգերից։ Դրանց շարքումն են և բազմաթիւ հայ գաղթականներ, որոնք թիւրքական հալա-

ծանքներից փախած՝ եկել էին հեռու աշխարհում բախտ որոնելու, իրանց չարքաշ կեանքը գէթ մասամբ մեղմացնելու:

Սակայն բոլոր հայ գաղթականներն էլ միայն բախտ որոնողներ չէին: Նրանց մէջ կային և այնպիսինները, որոնց ողեռում էր մի որոշ իդէալ: Գործունեայ երիտասարդներ էին դրանք, գաղափարական գործիչներ: Եւ ահա զրանց հետ ծանօթանում է կը:

Նա գեռ հայրենի Պրուսիայում եղած ժամանակ մերթընդմերթ լսել էր լուրեր հայերի մասին, նրանց կրած տառապանքների մասին: բայց գատարկ հնչիւններ էին զրանք, որ եկել անցել էին անհոգ ու զուարձաւէր օֆիցերի ականջի մօտով առանց մի որեէ նիւթ տալու նրա մտքին ու սրտին: Այն, նա ոչ մի գաղափար չունէր հայերի մասին, ոչնչ չը զիտէր նըրանց ազգային առանձնայատկութիւնների, լեզուի, կրօնի, անցեալի ու ներկայի մասին:

Ահա մի այզպիսի նախապատրաստութեամբ նա ծանօթանում է զաղթականների հետ, մօտենում է նրանց և նոյնիսկ մտերմանում: Հայերը տեսնում են, որ երի մէջ մի ազնիւ սիրտ է թագնուած, ուստի բաց են անում նրա առաջ իրանց վէրքերը, իրանց տենչերն ու յոյսերը: Եւ այդ ամենը զրաւում է էրին, խոր կարեկցութիւն է զարթեցնում նրա սրտում: Այդպիսով նա դառնում է հայերի գաղափարակիցն ու խորհրդակիցը:

Անցնում է որոշ ժամանակ, և մնաք տեսնում ենք էրին Ամերիկայից եկած Թիւրքիայի մայրսաքազարը—Պոլիս:

Մի հարուստ հայ, Ներսէս էփէնդի Սահակեան կասկածանք է յարուցանում թիւրք կառավարութեան կողմից, ուստի և ստիպուած է լինում շուտափոյթ կերպով փախչել իր ընակավայրից—Կ.-Պոլսից, որպէսզի գոնէ կեանքն ազատէ անխուսափելի վտանգից: Փախչում է նա ազատում, սակայն հարցը դրանով չէ փակուում: Նա ունէր ժառանգներ—հրկու զաւակներ: Հարկաւոր էր գոնէ նրանց իրաւունքներն ու շահերը պաշտպանել Ահա այդ միտաիան յանձնում են էրին, որը և թողնում է Ամերիկայի պարզ ու խաղաղ կեանքը և Կ.-Պոլիս է տեղափոխում, որպէսզի հովանաւորէ Սահակեանի զաւակներին:

Բայց այդ գեռ բոլորը չէ: էրի վրայ զրւում են և ուրիշ աւելի մեծ յոյսեր նրա բարեկամ հայ գործիչների կողմից: Յայտնի է, որ ամբողջ Թիւրքիայում և առանձնապէս Կ.-Պոլսում օտարահպատակները անհամեմատ մեծ ապահովութիւն ունեն, քան թէ թիւրքահպատակները: Թիւրք պաշտօնեան կամ ամբոխը միայն ամենածայրայիդ դէպքում կը համարձակուի ձեռք

մեկնել օտարահովատակի կեանքին ու դոյքին: Հենց այդ համազամանքից օգտուել են աշխատում ամերիկացի հայերը՝ մի քանի յանձնաբարութիւններ տալով էրին:

Վերջինս Կ.-Պոլոսւմ էլ գառնում է հայերի բարեկամը և հարկաւոր դէպքում չէ խնայում իր օգնութիւնը:

Սհա վերջապէս համուռմ են 1895—1896 թւականները: Նրա աչքի առաջ թիւրքերը գաղանարար կոտորում են հայերին, իսկ հայերը գրաւում են օտառմաննեան բանկը և կուռմ քաղաքի զանազան թաղերում ու փողոցներում:

Երջապատող սարսափիները չեն վախեցնում էրին: Կուր ամենատաք ժամանակը նա իր կեանքը վտանգի ենթարկելով՝ փողոց է գուրս դալիս և շապառում է սիրած օրիորդի կեանքն աղատելու...

Դադարում է կոտորածը, բայց էրի համար մի դատարկութիւն, մի ամայութիւն է բայց անում այդ հանգստութիւնը: Երբ ամենամօտիկ բարեկամները — մի իտումք հայ երիտասարդներ — չը կային այսօն: Մի կողմից այդ հանգստանքը, իսկ միւս կողմից իրերի անորոշ զրութիւնը ստիպում են էրին հեռանալ Կ.-Պոլսից:

Եէպի վերջում մենք տեսնում ենք նրան ամուսնացած ամերիկացի օրիորդ էլլէն Սէզսի հետ: Դեռ Ամերիկայում եղած ժամանակ էրը ծանօթացնել էր այդ օրիորդի հետ և նրա սրտում վառ սէր առաջացրել: Տարիներն անցել էին միմեանց յետեից, բայց այդ սէրը մնացել էր անչէջ, և ահա նա վերջապէս տանում է յաղթանակը՝ իրականացնելով սիրատենչ էլլէնի փայփայնքը:

Ընթերցողն իզուր է սպասում վիալուկան մի ամբողջութիւն «ղժքախստ ժողովրդից»: Նա զուկ է այդ ամբողջութիւնից, և դա նրա պակասաւոր կազմերից մէկն է կազմում:

Լինդաու պատմում է էրի անձնաւորութեան հետ կապ ունեցող մի շարք միջնադէպեր, բայց չի պատկերացնում սիրային մի ամբողջ կոլլիզիա իր հոգեքանական ելեէչերով:

Սակայն այդ էլ երկրորդական նշանակութիւն ունի զրեխաւոր նպատակի առաջ: Պատկերացնել «ղժքախստ» հայ «ժողովրդի» կեանքը, նրա ցաւերն ու տենչերը — ահա սա է այդ նպատակը, որին հասնելու համար հեղինակիր չէ ինայի ոչ մի ջանք:

Ընդհանրապէս գերմանացի հեղինակի այս վէպը սկզբից մինչեւ վերջը համակռւած է մարզասիրական բարձր ձգտումով, կարեկցութեան խոր զբացմունքով: Մենք առաջ բերինք նրա բովանդակութիւնը միայն այն չափով, որքան որ թոյլ են տա-

իս հայ ամսագրի սուղ էջերն ու պայմանները։ Սակայն այդքանից էլ կարելի է եղբակացնել, որ հեղինակը բացարձակ համակրանք է ցոյց տալիս դէպի հայ ժողովուրդը, մինո՞յն ժամանակ դուրս չը գալով անաշառութեան շրջանակից։

Հէնց այդ միևնույն անաշառութեան ձգտումն է, որ նրան ստիպել է ցոյց տալ, թէ թիւրքերն էլ ամբողջապէս բարբարոս ու գաղանաբարոյ ժողովուրդ չին, թէ նրանց մէջ էլ կան ազնիւ ձգտումների, բարի սրտի տէր մարդիկ։

Նա համակրելի գծերով դուրս է բերում էդհէմ փաշային և նրան էլ ստիպում է խօսել հայերի, հայկական խնդրի մասին — ի՞արեկէ, զուտ թիւրքական տեսակէտից։

Բացի այդ բոլորից՝ պ. Լինդառ աշխատել է իր համոզմունքի համեմատ պատկերացնել «Ղժբախտ ժողովրդի» նորկայի հետ կապուած քաղաքականութիւնը—մեծ պետութիւնների վերաբերմունքը, որից մեծ կախում ունի և ապագան...

Ճիշտ է, նրա գրուածքն ունի մի քանի թիւրութիւններ ու սիալներ, բայց դրանք շատ չնշին, շատ աննշան են միւս առաւելութիւնների, չօշափած զաղափարի, արծարծած հումանիտար մտքերի համեմատութեամբ։

Ե. ԹՈՓՉԵԱՆ

Դ. Աղայեան. ՊԱՏԿԵՐԱԿՈՐ ԱՅԲԵԽԱՐԱՆ. Թիֆ., 1903. թ., 8^o, 36 կր., գ. 13 կ.

Վաղուց է որ մեր ժողովրդի ընդարձակ խաւերի համար գրող հեղինակները ամեն յարմար առմի կրկնում են, որ ժամանակիս լաւագոյն զաղափարներն ու գործնական գիտութիւնները մեծ զժուարութեամբ են թափանցում մեր զիւզացիների ու արհեստաւորների մէջ զիստորապէս այն պատճառով, որ գրագէտների թիւը ժողովրդի այդ գասակարգերում շատ սահմանափակ է։ Անկասկած, այն միջոցների մէջ, որով մեր ինտելլիգենցիան կարող է մաքառել այս ազգակործան չարեքի գէմ, առաջին տեղն է բռնում մանկավարժական նորագոյն ըսկալունքներով կազմուած հանրամատչելի այբբենարանը, այդ համարդկային բարիքը, որից զժբաղդաբար զուրկ է մեր խեղճ ժողովուրդը, ինչպէս գրում է իր վերջին գրքոյկի («Քուն և երազ») մէջ բժ. Ա. Յուղաւզեանը, հրաւիրելով ձևոնհաս մարդկանց հազարներով տարածել ժողովրդի մէջ մի կոպէկանոց «այբուբէն»։ Այս հասունացած պահանջին բաւարարութիւն տալ յանձն է առել մեր տաղանդաւոր մանկական զրող Ղազ. Աղայեանը։